

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՅԱԳՆ ՎԱՐԱՋՂԱՏԻ

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՒԵԿՏԻՎԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՄԱԳՈՐԾԱԳՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ**

**ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ-2012

Ատենախոսության թեման հաստատվել է իս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Լ.Թ.Ասատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր Ա.Օ.Թովուզյան
Մանկավարժական գիտությունների
թեկնածու Յ.Յ.Կարապետյան

Առաջատար
կազմակերպություն՝

**Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան
պետական մանկավարժական
ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է դեկտեմբերի 20-ին ժամը 14:00-ին իս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՂ-ի «Մանկավարժություն» ՕՉՈ մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 375010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ իս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2012թ. նոյեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ա.Վ.Ավագյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ընտանիքը՝ որպես մարդկային սոցիալական կեցության հիմնական ձև, մոդել և համայնքի կառուցվածքային միավոր, համարվում է պետական հոգածության առարկա: Ընտանիքը հասարակության՝ ամուսնությանը կամ ազգակցական կապերով կապված, համատեղ ապրող, միմյանց համար բարոյական պատասխանատվություն կրող անդամների կողմից ձևավորված սկզբնական կառույց է: Ընտանիքի՝ որպես անձի սոցիալականացման առաջնային ինստիտուտի կարևորագույն գործառույթը աճող սերնդի դաստիարակությունը, զարգացումն ու սոցիալականացումն է: Նրանով են պայմանավորված հասարակության վերարտադրության, աճող սերնդի դաստիարակության, սոցիալականացման, նյութական ապահովության, հոգևոր կայուն զարգացման իրականացման հնարավորությունները:

Ներկայումս ընտանեկան դաստիարակության համակարգը որոշակի փոփոխություններ է կրում. սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային տեղաշարժերի հորձանուտում աղճատվում է նաև ավանդական ընտանիքի նկարագիրը՝ արդիական դարձնելով ընտանեկան դաստիարակության, դպրոցի, ընտանիքի և ընդհանրապես համայնքի համագործակցության հիմնախնդիրը:

Այս տեսանկյունից դպրոցների մանկավարժական կոլեկտիվները իրենց առաքելությունը պետք է տեսնեն ոչ միայն սովորողներին գիտելիքներ տալու, այլ բարոյական, մարդասիրական հատկանիշներով օժտված, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների, հասարակությանը նպաստ բերող ու գործուն անհատների դաստիարակման մեջ: Այդ առաքելությունը կարելի է իրագործել միայն մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և նրանց ընտանիքների հետ սերտ համագործակցության պայմաններում:

Ուսուցիչների, ծնողների և երեխաների փոխգործակցությունը կարող է արդյունավետ լինել, եթե նշված սուբյեկտներն ստանձնեն փոխհամաձայնեցված աշխատանքի պատասխանատվություն, գործեն միասին, համատեղ ջանքերով պլանավորեն գործունեությունը և իրականացնեն արդյունքների համատեղ գնահատում:

Այդօրինակ համագործակցությունը ենթադրում է մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխայի և համատեղ գործունեության նկատմամբ միասնական պահանջներ, երեխայի ուսումնասիրում ընտանիքում և նրա զարգացման ծրագրի կազմում: Միաժամանակ դպրոցի խնդիրն է զարգացնել ծնողների և երեխաների համագործակցության ու հաղորդակցման կարողությունները:

Հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության վերլուծությունը թույլ տվեց բացահայտել հետազոտվող հիմնախնդրի տարբեր տեսանկյունների մշակվածության աստիճանը:

Աճող սերնդի ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրը դիտարկվել է Խ. Աբովյանի, Մ. Թաղիարյանի, Մ. Նալբանդյանի, Ղ. Աղայանի, Ռ. Պատկանյանի, Ա. Բահարյանի, Կ. Ն. Վենտցելի, Պ. Ֆ. Կապտերևի, Յ. Ա. Կոմենսկու, Պ. Ֆ. Լեսզաֆտի, Ջ.Լոկի, Ա. Ս. Մակարենկոյի, Ի. Յ. Պետալոցցու, Ն. Ի. Պիրոգովի, Ժ. Ժ. Ռուսոյի, Վ. Ա. Սուլստոմլինսկու, Լ. Ն. Տոլստոյի, Կ.Դ. Ուշինսկու և այլոց կողմից:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության կազմակերպման հիմնախնդրի գիտատեսական հիմունքներն արտացոլված են Ա. Տ. Շացկու, Ն. Ի. Բոլդիրևի, Ի. Վ. Գրեբեննիկովի, Վ.Ն.Գուրովի, Վ.Ա.Կարակովսկու, Մ. Մ. Պոտաշնիկի, Ն.Ե. Շչուրկովայի, Ա. Օ. Թոփուլյանի Ժ. Ս. Թադևոսյանի, Յ. Կ. Կարապետյանի, և այլոց աշխատություններում:

Ընտանեկան դաստիարակության արդի հիմնախնդիրները դիտարկվել են Ա. Լ. Գրիգորյանի, Լ.Վ. Թորգոմյանի, Գ. Յ. Յակոբյանի, Յու.Պ. Ազարովի, Ի.Վ. Բեստուժևա-Լադայի, Է.Կ. Վասիլևի, Վ. Ա. Կան-Կալիկի և այլոց կողմից:

Դպրոցի և համայնքի, այդ թվում սովորողի ծնողների հետ փոխգործակցության հիմնահարցերը հետազոտվել են Ռ.Կ.Մուրադյանի, Ս.Ս.Խրիմյանի, Յ. Կ. Կարապետյանի, Վ. Գ. Բոչարովայի, Բ. Ջ. Վուլֆովի, Վ.Վ. Դրուժնիկի, Ա.Վ. Մուրդիկի, Լ. Ի. Նովիկովայի, Ն. Ի. Դերեկլեայի, Տ. Ա. Ֆակլովիչի, Ն. Ս. Տոլստուխովայի, Լ. Ա. Օբուխովայի և այլոց կողմից:

Սոցիալ-մանկավարժական և հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ ընտանեկան դաստիարակության՝ հարգանքի և վստահության վրա հիմնված ոճերը, ծնողների հեղինակությունը, ընտանիքում երեխայի հետ շփման առանձնահատկությունները նպաստում են ներընտանեկան կապերի ամրապնդմանը, բարոյական բարձր պատասխանատվության մթնոլորտի, փոխօգնության ավանդույթների ձևավորմանը: Ընտանիքը եղել և տեսանելի ապագայում էլ կլինի աճող սերնդի դաստիարակության հիմքը: Ծնողների հետ շփման ժամանակի սղությունը, փոխգործակցության սահմանափակումը, ընտանեկան դաստիարակության ավտորիտար ոճը ընտանիքում բարոյահոգեբանական և հուզական հարաբերությունների քայքայման պատճառ են դառնում, մինչդեռ դրանք ընտանեկան դաստիարակության արդյունավետության հիմնական այն պայմաններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի բնականոն զարգացման համար, և որոնք բացակայությունը կարող է հանգեցնել ներընտանեկան հարաբերությունների ճգնաժամի, օտարացման և սերունդների միջև կյանքի իմաստաձևավորող կապերի ընդհատման:

Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների արդի զարգացումներում երեխաներն ունեն հաղորդակցման մեծ հնարավորություններ, որը դպրոցի և համայնքի համագործակցության ուղիների ու ձևերի վերանայման անհրաժեշտություն է ծնում: Արդիական են դառնում համայնքի՝ ընտանիքների, կրթական հաստատությունների փոխգործակցության ուղիների և ձևերի որոշակիացումը, նախագծումը, այդ գործընթացի արդյունքների վերլուծությունն ու ընդհանրացումը երեխայի ամձի զարգացման համատեքստում:

Այսօր առկա է օբյեկտիվ հակասություն՝ կապված երեխաների և ծնողների շփման, ծնողների՝ դաստիարակության բնագավառի վերաբերյալ

հստակ գիտելիքների ոչ բավականաչափ ձևավորվածության, երեխայի համար միասնական դաստիարակչական միջավայր ստեղծելու և արհեստականորեն այդ միջավայրը դպրոցական ու ընտանեկան միջավայրի բաժանելու միջև, ինչպես նաև ներընտանեկան փոխգործակցության՝ ծնողների ու երեխաների համատեղ գործունեության միջոցով ընտանիքի պահպանման ու ամրապնդման և համագործակցության առումով մանկավարժական կոլեկտիվի կողմից ծնողներին հոգեբանական աջակցության անհրաժեշտության և մանկավարժական լուսավորության ապահովման գիտամեթոդական հիմունքների, մեթոդիկայի և աշխատանքի արդյունավետ ձևերի անբավարար մշակվածության միջև:

Այս հակասությունների լուծման անհրաժեշտությունը պայմանավորեց մեր հետազոտության թեմայի ընտրությունը՝ **«Մանկավարժական կոլեկտիվի և համայնքի համագործակցության կազմակերպման ձևերը դպրոցում»:**

Յետազոտության նպատակն է մշակել և գիտափորձով հիմնավորել դպրոցի կառավարման համակարգում ընտանիքների և համայնքի, սովորողների և ծնողների փոխգործակցության արդյունավետության համալիրը, դրա ապահովման ուղիները, միջոցներն ու ձևերը: Գիտափորձով հիմնավորել մանկավարժական այն պայմանները, որոնք արդյունավետ կդարձնեն դպրոցի, սովորողների և նրանց ընտանիքների համագործակցությունը միասնական դաստիարակչական դաշտի ապահովման տեսանկյունից:

Յետազոտության օբյեկտը դպրոցի մանկավարժական կոլեկտիվի և համայնքի արդյունավետ համագործակցության կազմակերպման գործընթացն է:

Յետազոտության առարկան ներդպրոցական կառավարման համակարգում մանկավարժական կոլեկտիվի և համայնքի համագործակցության կազմակերպման ձևերն ու միջոցներն են:

Յետազոտության վարկածը կայանում է այն ենթադրության մեջ, որ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և նրանց ծնողների համագործակցությունը մեծ մասամբ կարող է հիմնվել նրանցից յուրաքանչյուրի կողմից իրենց դերի գիտակցման, նրանց փոխըմբռնման, փոխօգնության, ընդհանուր հետաքրքրությունների և արժեքների վրա: Այդ համագործակցությունն ավելի արդյունավետ կլինի, եթե՝

- բացահայտվի և սահմանվի դպրոցի մանկավարժական կոլեկտիվի ու համայնքի համագործակցության բովանդակությունը,
- առանձնացվեն ընտանիքների տիպերը, որոնք իրարից տարբերվում են ներընտանեկան փոխգործակցության տեսակներով,
- որոշվեն դպրոցի, ծնողների և սովորողների համագործակցության հիմնական ուղղությունները, ձևերի ու միջոցների համալիրը,
- հաշվի առնվեն ընտանիքի զարգացման ժամանակակից միտումները,

- մշակվեն, տեսականորեն և գիտափորձով հիմնավորվեն ու դպրոցի դաստիարակչական համակարգում ներդրվեն մանկավարժների, սովորողների և ծնողների արդյունավետ համագործակցության և փոխգործակցության կառավարման տեսությունն ու մեթոդիկան,
- ներդպրոցական կառավարման համակարգում ապահովվի մանկավարժների տեսական և մեթոդական պատրաստությունը դպրոցի և համայնքի համագործակցության արդյունավետ զարգացման համար:

Հետազոտության հիմնախնդրին, օբյեկտին, առարկային և վարկածին համապատասխան սահմանվել են հետևյալ **խնդիրները**.

1. Բացահայտել և վերլուծել դպրոցի մանկավարժական կուլեկտիվի, սովորողների և ծնողների համագործակցության կազմակերպման հիմնախնդրի մշակվածության աստիճանը, որոշակիացնել տեսական-հայեցակարգային մոտեցումները խնդրի արդյունավետ լուծման վերաբերյալ:
2. Որոշել դպրոցի մանկավարժական կուլեկտիվի, ծնողների և սովորողների հետ համագործակցության և փոխգործակցության կազմակերպման հիմնական ուղղությունները:
3. Սահմանել և բնութագրել դպրոցի մանկավարժական կուլեկտիվի, սովորողների ու ծնողների համագործակցության բովանդակությունը և դրա արդյունավետ իրականացման մեթոդիկան:
4. Մշակել և տեսականորեն հիմնավորել սովորողների, նրանց ծնողների և մանկավարժական կուլեկտիվի փոխգործակցության արդյունավետ մանկավարժական պայմանների՝ ձևերի և միջոցների համալիրը դպրոցի կառավարման համակարգում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմում՝

- գիտամանկավարժական հետազոտությունների կազմակերպման և իրականացման տեսությունները (Վ.Ի. Չապլյազինսկի, Վ.Վ. Կրասնի, Ի.Յա. Լերներ, Գ.Խ. Վալիև, Պ.Ի. Օբրազցովիչ, Ա.Մ. Նովիկով, ԼՎ. Տրուբայչուկ, Լ.Թ.Ասատրյան, Գ.Հ.Հակոբյան և այլք),
- ընտանիքի՝ որպես անձի սոցիալականացման առաջնային գործոնի և նրա գործառնությունների վերաբերյալ սոցիալ-հոգեբանական տեսությունները,
- դրոցի կառավարման տեսությունը (Վ.Ս. Լազարև, Տ.Պ. Աֆանասև, Պ.Ի. Տրետյակով, Տ.Ի. Շանովա, Լ.Թ.Ասատրյան և այլք),
- սոցիալական դաստիարակության տեսությունը (Յու. Ա. Գասպարյան, Ս. Ջ. Արզումանյան, Ա. Օ. Թոփոզյան, Վ.Գ.Բոչարովա, Ա.Վ. Մուդրիկ, Լ.Ի.Նովիկովա, և այլք), համակարգային մոտեցման տեսությունը (Ա.Վ.Ավերյանով,

Յու.Կ. Բաբանսկի, Վ.Ի.Ջազվյազհինսկի, Վ.Ա. Կարակովսկի, Ա.Ա.Դուկասյան, Լ.Թ.Ասատրյան, Ա.Ս. Կարապետյան և այլք),

- մշակութաբանական, սուբյեկտագործունային և սոցիալ-ամձնակողմնորոշված մոտեցումները:

Դրված խնդիրները լուծելու համար օգտագործվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝

- փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանական, մանկավարժական գրականության տեսական վերլուծություն, համադրում և ընդհանրացում,
- փորձարարական (եմպիրիկ) մեթոդներ՝ դիտում, անկետավորում, զրույց, հարցազրույց, դպրոցական փաստաթղթերի ուսումնասիրում, փորձաքննական գնահատում, ինքնագնահատում, մանկավարժական գիտափորձ, արդյունքների վիճակագրական և մաթեմատիկական մշակման մեթոդներ:

Հետազոտության բազան:

Փորձարարական աշխատանքներն իրականացել են Երևան քաղաքի թիվ 93, 100, 109, 138, 192, 196, 199 հանրակրթական դպրոցների բազայի վրա: Հետազոտության մեջ ներգրավվել են 40 ուսուցիչ, 100 աշակերտ և 100 ծնող:

Հետազոտության փուլերը: Հետազոտությունն անցկացվել է երեք փուլով.

Առաջին փուլում (2003-2005 թթ.) ուսումնասիրվել է հետազոտության հիմնախնդիրն վերաբերող գրականությունը, որոշակիացվել են մոտեցումները դպրոցի և համայնքի համագործակցության և դրա արդյունավետության ապահովման վերաբերյալ: Առաջադրվել է վարկածը, որոշակիացվել են հետազոտական մեթոդները:

Երկրորդ փուլում (2006-2008թթ.) որոշակիացվել են դպրոցի և համայնքի համագործակցության բովանդակությունը, հիմնական ուղղությունները, իրականացվել է դրա արդյունավետ իրացման նպատակով մշակված մանկավարժական պայմանների՝ ձևերի ու միջոցների փորձարարական ստուգում:

Երրորդ փուլում (2008-2011թթ.) համակարգվել են տեսական վերլուծության արդյունքները, մանկավարժական գիտափորձով ստացված տվյալները, ձևակերպվել են եզրակացությունները, կատարվել է ատենախոսության ձևավորումը:

Հետազոտության գիտական նորույթը.

- Որոշվել և բնութագրվել են դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և նրանց ընտանիքների համագործակցության հիմնական ուղղությունները, առանձնահատկությունները դպրոցի դաստիարակչական աշխատանքների համակարգում:
- Սահմանվել են դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և ծնողների համագործակցության սկզբունքները,

արդյունավետության ձևերը, միջոցները, ցուցանիշներն ու չափանիշները:

- Մշակվել և հանրակրթական դպրոցի՝ համայնքի հետ տարվող դաստիարակչական աշխատանքների համակարգում ներդրվել է մանկավարժական պայմանների համալիրը, որի կիրառումը արդյունավետ է դարձնում մանկավարժների, սովորողների և ծնողների համագործակցության կազմակերպումը՝ որպես սովորողների ամձի դաստիարակության և զարգացման գործընթացի արդյունավետության գրավական:

Ֆետագոտության տեսական նշանակությունը.

- Դիտարկված և վերլուծված են դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, համայնքի, հատկապես նրա հիմնական մաս կազմող ընտանիքի, նրա դաստիարակչական գործառնության իրականացման արդյունավետության, երեխաների հետ համագործակցության կազմակերպման վերաբերյալ տեսական և հայեցակարգային մոտեցումները:
- Մշակված և գիտափորձով հիմնավորված է մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և նրանց ծնողների՝ դպրոցի կրթադաստիարակչական գործընթացի շրջանակներում իրականացվող համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների բովանդակությունը:

Ֆետագոտության գործնական նշանակությունը

կայանում է նրանում, որ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և ընտանիքի համագործակցության արդյունավետության ապահովման, ծնողների կողմից մանկավարժական գիտելիքների տիրապետման գործընթացի կազմակերպման նպատակով մշակված մեթոդական հանձնարարականները կարող են օգտագործվել դպրոց-համայնք համագործակցության կառավարման գործընթացում:

Մշակված դպրոցի, երեխաների և ընտանիքի համագործակցության՝ մեր կողմից մշակված մանկավարժական պայմանները թույլ են տալիս ապահովել այդ գործընթացի արդյունավետությունը և կարող են օգտագործվել դպրոցի մանկավարժական կոլեկտիվի՝ ողջ համայնքի հետ տարվող աշխատանքներում:

Մշակված են գործնական հանձնարարականներ դպրոցի դաստիարակության գործընթացի կառավարման սուբյեկտների համար:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և ընտանիքների համագործակցության արդյունավետությունը պայմանավորված է համայնքի տարածքային-միջավայրային առանձնահատկությունների հաշվառմամբ, դպրոցի ընդհանուր դաստիարակչական խնդիրների և ընտանեկան դաստիարակության յուրահատկություններով ու համայնքի սոցիալ-դաստիարակչական ներուժով:

2. Դպրոցի կողմից սովորողների և նրանց ծնողների փոխգործակցության կազմակերպման արդյունավետությունը կարող է ապահովվել հատուկ սահմանված մանկավարժական պայմաններով՝

- համագործակցային, ստեղծագործական միջավայրի ստեղծման ձևերի ու միջոցների կիրառում,
- դպրոցում հոգեբանական և սոցիալ-մանկավարժական ծառայության ակտիվ գործունեություն,
- ընտանիքում երեխայի՝ որպես անձնավորության կայացման և զարգացման համար հարմարավետ մանկավարժական պայմանների ապահովում՝ ծնողների հոգեբանամանկավարժական լուսավորության միջոցով,
- դպրոցի կողմից ամբողջ համայնքի հետ համագործակցության հատուկ ծրագրերի իրականացում, որը ներառում է բովանդակային, արժեկողմնորոշիչ-հուզական, հոգևոր-բարոյական, գնահատողական-շտկողական տեսանկյունները,
- ընտանիքի՝ դպրոցի հետ համագործակցելու պատրաստականության դրսևորում,
- ծնողների տեղեկացվածությունը դպրոցի և դասարանի կենսագործունեության մասին,
- ծնողների՝ դպրոցական կոլեկտիվի կենսագործունեության մեջ ներգրավելու անհրաժեշտության գիտակցումը տնօրինության և ուսուցիչների կողմից,
- ուսուցիչների հոգեբանամանկավարժական պատրաստությունը համայնքի յուրաքանչյուր ընտանիքի՝ որպես դաստիարակչական գործընթացի սուբյեկտի հետ համագործակցությանը:

3. Ընտանիքի՝ որպես սոցիալականացման առաջնային գործոնի դաստիարակչական գործառույթի իրականացման արդյունավետությունը որոշվում է ծնողների և երեխաների փոխգործակցության մակարդակով՝ ընտանիքի կենսակերպի միասնականացնող մանկավարժական բնութագրով, նրա անդամների միջանձնային հարաբերությունների, սոցիալական դերերի յուրացման և ընտանեկան դաստիարակության ոճերով ու համատեղ գործունեության առանձնահատկություններով, որոնք իրենցից ներկայացնում են ծնողների և երեխաների փոխադարձաբար պայմանավորված գործողություններ և փոխադարձ ազդեցություն:

4. Դպրոցի, երեխաների և ծնողների համագործակցության և փոխգործակցության մանկավարժական արդյունավետությունը որոշվում է հետևյալ չափանիշներով՝

- ծնողների մանկավարժական պատրաստության մակարդակով,
- երեխաների հասարակական և սոցիալական ակտիվ գործունեության նկատմամբ ծնողների դրական վերաբերմունքով:

5. Դպրոցի և ընտանիքի համագործակցության, երեխաների և նրանց ծնողների գործակցության արդյունավետությունն ապահովվում է դպրոցի կառավարմանը ծնողների ակտիվ մասնակցությամբ, ծնողական համալսարաններում նրանց ներգրավմամբ և մանկավարժական գիտելիքների հաստացմամբ:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովված է առենախոսի գիտատեսական և մեթոդաբանական ճիշտ դիրքորոշումներով, հետազոտության ընդգրկումն բազայով, գիտահետազոտական մեթոդների արդունավետ կիրառմամբ, հետազոտվողների քանակով, ինչպես նաև որպես մանկավարժի և դպրոցի տնօրենի անձնական փորձով և գիտափորձի անձնական մասնակցությամբ:

Հետազոտության փորձաքննությունը և ներդրումը:

Հետազոտության արդյունքները արտացոլվել են հիմնախնդրի վերաբերյալ տպագրված հոդվածներում, քննարկվել են մանկավարժական բնագավառի աշխատողների համար կազմակերպվող սեմինարներում, համաժողովներում, իս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության ամբիոնի նիստերում:

Աշխատանքի կառուցվածքը: Առենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Առենախոսության՝ «Դպրոցի և համայնքի համագործակցության տեսական- մեթոդաբանական հիմքերը» խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Ընտանիքը որպես երեխայի առաջնային սոցիալականացման գործոն, նրա դաստիարակչական գործառույթները» ենթագլխում դիտարկվում են ընտանիքը՝ որպես համայնքային միավոր, նրա դաստիարակչական գործառույթները: Դպրոցի և սոցիումի համագործակցության եռությունը և նպատակը հստակեցնելու նպատակով դիտարկվում են ընտանիքների տիպերի, գործառույթների, կառուցվածքային չափանիշների առանձնահատկությունների, դաստիարակչական ներուժի և դաստիարակչության ոճերի վերաբերյալ գոյություն ունեցող փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանական, մանկավարժական մոտեցումները:

Ա. Ա. Նալչաջյանի, Կ.Ա. Նալչաջյանի, Ս. Ջ. Արզումանյանի, Ս. Ա. Սեդրակյանի, Յու. Ա. Գասպարյանի, Ա. Ա. Դուկասյանի, Լ. Թ. Ասատրյանի, Ա. Թ. Կարապետյանի, Ա. Օ. Թովուզյանի, Ն. Կ. Չարությունյանի, Լ.Վ. Թորգոմյանի, Ռ. Սերտոնի, Տ. Շիրոտանիի, Վ. Ն. Կունիցինայի, Ն.Վ. Նազատինովայի, Վ. Կ. Պոզոլշայի, Վ.Ն. Սմելզիրի, Մ.Ն. Բուչանովի, Բուրդիեի, Տ. Ի. Շանովայի, Լ.Ի. Պետրովայի, Ն.Ի. Դերեկլեայի և ուրիշների՝ հիմնախնդրի վերաբերյալ տեսակետների, հայեցակարգային մոտեցումների դիտարկման և

համեմատական վերլուծության արդյունքում հետազոտության մեջ ներկայացվում և բնութագրվում են ընտանիքի՝ որպես սոցիալական ինստիտուտի կառուցվածքային չափանիշները, տիպերը, հենքային գործառույթները, ընտանեկան դաստիարակության խնդիրները, նրա սոցիալական էության վերաբերյալ արժեքանական, գործառույթային, տարբերակված մոտեցումները, ցույց է տրվում դրանց փոխառնչությունները: Չստակեցվում են «ներուժ», «դաստիարակչական ներուժ», «դաստիարակչական հնարավորություններ» հասկացությունները: Հիմնավորվում է, որ ընտանիքի դաստիարակչական ներուժը ինտեգրատիվ որակ է, որը ներառում է նրա տնտեսական, մշակութային, բարոյական, ստեղծագործական, վերարտադրողական գործառույթները: Ընտանիքի դաստիարակչական ներուժն է որոշում ընտանիքի դաստիարակչական գործառույթի իրականացման արդյունավետությունը՝ ուղղված անձի ձևավորմանը:

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բոլոր հետազոտողներն առանձնացնում են ընտանիքի դաստիարակչական ներուժի հետևյալ ընդհանուր բաղադրիչները՝ ներընտանեկան հարաբերությունները, ծնող-երեխա դերային հարաբերությունները, ծնողների բարոյական օրինակը, ընտանիքի կազմը, նրա կենսագործունեությունը, ծնողների կրթության ու մանկավարժական գրագիտության մակարդակը, ծնողների մասնագիտությունը, երեխաների դաստիարակության համար նրանց պատասխանատվության աստիճանը:

Այս տեսանկյունից դիտարկվել են «ծնող-երեխա» արդյունավետ փոխգործակցության սկզբունքները, դրանց վրա ազդող գործոնները՝ ընտանիքի տիպերը, դաստիարակության ոճերը, ծնողների հոգեբանամանկավարժական գիտելիքների և կոմպետենտությունների մակարդակը, ընտանիքի մշակութային և սոցիալական կապիտալը, մանկավարժական կոլեկտիվի կողմից ծնողների համար իրականացվող մանկավարժական աջակցությունը և խորհրդատվությունը:

Դպրոցի կառավարման գործընթացում մանկավարժական կոլեկտիվի և ընտանիքի համագործակցության արդյունավետ կազմակերպման եղանակների որոնման նպատակով **«Դպրոցի և համայնքի համագործակցության և ներընտանեկան փոխգործակցության ընդհանուր բնութագիրը»** երկրորդ ենթագլխում ներկայացվում են «համագործակցություն», «փոխգործակցություն» հասկացությունների էությունը և դրանց բնութագրման վերաբերյալ մի շարք փիլիսոփայական, սոցիոլոգիական, մանկավարժական հայեցակարգային մոտեցումներ: Տրվում են մանկավարժական համագործակցություն և ներընտանեկան փոխգործակցություն հասկացությունների ընդհանուր բնութագրերը և տիպաբանությունը:

Հետազոտությամբ բացահայտվել է, որ համագործակցությունը և փոխգործակցությունը տեղի են ունենում՝ ծնողների ու երեխաների գործունեության և շփման ընթացքում՝ միջանձնային հարաբերությունների բոլոր ձևերում և տեսակներում, մասնավորապես իմացական, որտեղ ծնողները հանդես են գալիս որպես տեղեկատվության, ստացման գաղափարների, կարծիքների, հայացքների ձևավորման աղբյուր: Տեսական նյութի

վերլուծությունն ու ընդհանրացումը հնարավորություն են տալիս ձևակերպելու երկու հիմնական հետազոտական դիրքորոշում.

1. Դպրոցի և ընտանիքի համագործակցության կազմակերպման հիմնական նպատակը պետք է լինի ընտանիքի ներգրավումը դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման համակարգում, որտեղ ծնողները պետք է լինեն հավասարազոր սուբյեկտներ:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցի և ընտանիքի համագործակցությունը ենթադրում է նրանց երեխաների՝ սոցիալականացման հավասարազոր սուբյեկտներ լինելը, դպրոցի կողմից ընտանիքին պետք է ցույց տրվի իրական հոգեբանական և սոցիալ-մանկավարժական օգնություն:

Համագործակցությանը բնորոշ են փոխադարձ աջակցությունը, փոխօգնությունը և փոխգործակցությունը:

Ելնելով այդ դիտարկումներից՝ մենք երեխաների և ծնողների փոխգործակցությունը սահմանել ենք որպես ընտանիքի ապրելակերպի, ընտանիքի անդամների միջանձնային հարաբերությունների, հուզական-հոգեբանական համատեղելիության առանձնահատկությունների մանկավարժական բնութագիր, որը շրջափոխային պատճառական կախվածությամբ կապված ծնողների ու երեխաների փոխադարձաբար պայմանավորված անհատական գործողությունների համակարգ է, ընդսմին փոխգործակցության յուրաքանչյուր սուբյեկտի վարքը մյուսների վարքի նկատմամբ միաժամանակ հանդես է գալիս և՛ որպես կողմնորոշիչ, և՛ արդյունք:

Ծնողների ու երեխաների փոխգործակցության կառուցվածքում առանձնացվում են հուզական, արյունակցական ու վարքագծային բաղադրիչներ:

Հենվելով ամերիկացի սոցիոլոգ Բուրդիեի հայեցակարգային դիրքորոշումների վրա՝ մենք գտնում ենք, որ յուրաքանչյուր ընտանիքի մշակութային, տնտեսական և սոցիալական կապիտալով է պայմանավորված ծնողների և երեխաների փոխգործակցության արդյունքների վերլուծությունը:

Ներկայացվում են ծնողների և երեխաների փոխգործակցության արդյունավետության չափանիշները: Բնութագրվում են ընտանեկան դաստիարակության ոճերը:

Մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում առկա հայեցակարգային մոտեցումների և մեր դիտարկումների հիման վրա հիմնավորվում է դպրոցի և ընտանիքի համագործակցության սկզբունքների համալիրը: Ներկայացվում է մանկավարժական կոլեկտիվի կողմից ծնողների դաստիարակության իրականացման ալգորիթմը:

Երրորդ՝ «Դպրոցի կառավարման համակարգում մանկավարժական կոլեկտիվի և համայնքի համագործակցության ձևերն ու միջոցները» ենթապլանում տեսական մոտեցումների, հետազոտության արդյունքների հիման վրա հիմնավորվել է դպրոցի և ընտանիքի համագործակցության մի շարք ձևերի և միջոցների համալիրը, որը նպաստում է ծնողների և երեխաների վրա մանկավարժական կոլեկտիվի ներգործության բարելավմանը: Դրանց թվում են ընդհանուր դպրոցական և դասարանական ծնողների ժողովները,

մանկավարժական համաժողովները, ծնողական դասախոսությունները, գործնական խաղերը և բաց դռների օրերը, դպրոցական ընդհանուր կայքում դասղեկի կայքէջը, ծնողների հետ տարվող աշխատանքի անհատական ձևերը՝ այցելություն ընտանիք, անհատական խորհրդատվություն և աշխատանք ծնողական ակտիվի հետ: Ծնողների հետ անհատական աշխատանքը կարող է ներառել որոշակի ծրագրով կանոնավոր մանկավարժական զրույցները ինչպես ծնողների, այնպես էլ նրանց երեխաների հետ, դպրոցի մանկավարժներից և հրավիրված մանկավարժագետներից կազմված խորհրդատվական խմբերի աշխատանքը դաստիարակության առանձին հարցերի վերաբերյալ, ծնողների անհատական խորհրդատվությունները, ծնողների ներգրավումը մանկավարժական ինքնակրթության մեջ:

Դրանց թվին են պատկանում նաև մանկավարժական տեղեկատվությունը, կոնֆերանսները, դասղեկական դասերը, ծնողական փորձի դասերը և այլն: Իհարկե, դպրոց-ընտանիք համագործակցության հիմնական ձևը դասարանական ծնողական ժողովներն են, որը պետք է իրականացնել որոշակի փուլերով:

Ներկայացվում է ծնողական ժողովների՝ ատենախոսի կողմից մշակված թեմատիկան ըստ բլոկ-մոդուլների, ինչպես նաև հանգամանալից բնութագրվում են ծնողների հետ դպրոցի համագործակցության մյուս ձևերը՝ մանկավարժական տեղեկացվածությունը, դպրոցի սովորողների, ընտանիքների և համայնքում առկա պետական հասարակական կազմակերպությունների փոխօգնության, ծնողների հետ տարվող հոգեբանամանկավարժական աշխատանքների կենտրոնների գործունեությունը: Որպես դպրոցի մանկավարժական կոլեկտիվի և ծնողների համագործակցության ակտիվ ձև առաջարկվում է **«Ծնողների մանկավարժական պատրաստության կենտրոնի»** ստեղծումը: Ներկայացվում են այդ կառույցի հայեցակարգը, խնդիրները և գործունեության բովանդակությունը:

Առանձնացվում են ծնողների և երեխաների փոխգործակցության կարգավորման առավել կարևոր միջոցները, ծնողներին մանկավարժական աջակցության բովանդակությունը, տեսական պարապմունքներ՝ ծանոթացում ուսուցման սկզբունքներին, մեթոդներին, ձևերին, գործնական պարապմունքներ՝ մանկավարժական խնդիրների լուծում, հաղորդակցման ձևեր, էքսկուրսիաների պլանավորման և նախապատրաստման աշխատանքներ:

Այս դիտարկումների համատեքստում առանձնացվել են դպրոցի և համայնքի համագործակցության և դրա միջոցով ծնողների ու նրանց երեխաների փոխգործակցության արդյունավետության կազմակերպման տեսական մոտեցումները: Որոշակիացվել են դպրոց-ընտանիք համագործակցության, ծնող-երեխա փոխգործակցության արդյունքների որակի ցուցիչները:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Սովորողների ուսումնաճանաչողական արդյունավետ գործունեության և ակտիվության ապահովման ռազմավարության և մարտավարության մշակում:

2. Ուսուցիչների, սովորողների և նրանց ծնողների փոխգործակցության երկարաժամկետ համալիր ծրագրի մշակում՝ ընտանեկան դաստիարակության ավանդույթների վերածնունդն նպատակով:
3. Ծնողների հոգեբանամանկավարժական, սոցիալական գիտելիքների հարստացման ուղղությամբ պլանավորված, անընդմեջ աշխատանքների կազմակերպում:
4. Ընտանեկան դաստիարակության դրական փորձի փոխանակում համադպրոցական մակարդակում:
5. Ուսուցիչների, ծնողների և երեխաների համաստեղ-ծագործական գործունեության և ազատ ժամանակի կազմակերպում՝ որպես փոխգործակցության կազմակերպման լավագույն տարբերակ:

Ատենախոսության «**Ղպրոցի և համայնքի համագործակցության կազմակերպման փորձարարական աշխատանքների վերլուծությունը**» խորագիրը կրող երկրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին՝ «**Մանկավարժական կոլեկտիվի և ընտանիքի համագործակցության կազմակերպման պայմանները և տեխնոլոգիան**» խորագրով ենթագլխում բացահայտված են մանկավարժական կոլեկտիվի և ընտանիքի համագործակցության արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմանները դպրոցի կառավարման համակարգում՝ ուսուցչի մարդասիրական կողմնորոշումը, ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, ծնող-երեխա համակարգում փոխվստահության մթնոլորտի ապահովումը, համատեղ գործունեության մեջ փոխընթեմումը, համաստեղծագործական-կրթական միջավայրի ստեղծումը, ուսուցիչների կոմպետենտությունը, մանկավարժական համագործակցության կառուցվածքի մոդելավորումը, մանկավարժական խնդիրների առաջադրումը, փոխօգնության և փոխադարձ բարյացակամության մթնոլորտի ստեղծումը, համամարդկային արժեքների նկատմամբ հարգանքի ձևավորման առումով դրական ներգործությունների կիրառումը, կոլեկտիվ խաղերի և միջոցառումների կազմակերպումը, քաղաքացիական, մարդասիրական դաստիարակության գաղափարների քարոզումը, ընտանիքի և դպրոցի դաստիարակչական ներուժի օբյեկտիվ գնահատումը, ժողովրդավարական սկզբունքների գարգացումը փոխհարաբերություններում, առաջացող հիմնախնդիրների արդյունավետ, կառուցողական քննարկումը, ընդհանուր համաձայնության ձգտումը դաստիարակչական գործընթացի բոլոր փուլերում, կողմերի ներգրավվածությունը ստեղծագործական, դաստիարակչական գործընթացում:

Նշվում է, որ հանրակրթական դպրոցում կրթության բովանդակության բարդացման, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության օրեցօր ավելացման արդի պայմաններում ոչ միայն դպրոցը, այլև երեխաներն են զգում ծնողների մանկավարժական գրագիտության անհրաժեշտությունը: Ուստի անհրաժեշտ է որոշակիացնել ընտանիքի կրթադաստիարակչական գործառույթները դպրոցի աշխատանքային պլանում ծնողների ուսուցման ծրագրի ներկայացման, ինչպես նաև որոշակի մանկավարժական պայմանների

և ընտանիքի հետ համագործակցության նոր ձևերի և մեթոդների մշակման միջոցով:

Բացահայտվում են ժամանակակից ընտանիքին մանկավարժական աջակցության էությունը և առանձնահատկությունները:

Ըստ մեզ՝ ծնողներին մանկավարժական աջակցության բովանդակությունը պետք է լինի հետևյալը՝

- տեսական պարապմունքներ՝ ծանոթացում ուսուցման սկզբունքներին, մեթոդներին, ձևերին,
- գործնական պարապմունքներ՝ մանկավարժական խնդիրների լուծում, հաղորդակցման ձևեր, էքսկուրսիաների պլանավորման և նախապատրաստման աշխատանքներ:

Ժամանակակից ընտանիքին ցույց տրվող մանկավարժական աջակցությունն ունի իր առանձնահատկությունները, որոնցից են՝

1. ծնողների տիպաբանության հաշվառումը,
2. ծնողների՝ մանկավարժական օգնություն ստանալու և մանկավարժական գիտելիքների ձեռք բերելու պահանջումները,
3. ընտանիքում ծնողների երեխաների հետ փոխգործակցության ընթացքում ծագած հակասությունների բնույթը,
4. ընտանեկան դաստիարակության ոճերը:

Երկրորդ՝ **«Դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերի և միջոցների փորձարարական հիմնավորումը և արդյունքների վերլուծությունը»** խորագրով ենթազխում ներկայացվում են ծնողների ու երեխաների փոխգործակցության վիճակի իրական պատկերը բացահայտող անկետային հարցումների արդյունքները և դրանց վերլուծությունը: Մեզ անհրաժեշտ էր ստանալ ժամանակակից ծնողների ու երեխաների փոխգործակցության վիճակի իրական պատկերը, որոշել դասղեկների դերը ընտանիքում ծնողների ու երեխաների փոխգործակցության հիմնախնդիրների լուծման գործում, գրանցել ուսուցիչների, ծնողների ու երեխաների փոխհարաբերությունների զարգացման ժամանակակից միտումները, որոշել ծնողների ու երեխաների փոխգործակցության բովանդակությունը և ուղղվածությունը, նրանց բնավորության գծերը, ուսումնասիրել ներընտանեկան շփման ու համագործակցության մանկավարժական ղեկավարման փորձն ու դերը:

Չետագոտությունում բացահայտվեց, որ ընտանիքում ծնողների և երեխաների արդյունավետ փոխգործակցության վրա էապես ազդում են նրանց անձնային որակները, համատեղ գործունեությունը, ծնողների մանկավարժական գիտելիքները, դաստիարակվածության մակարդակը, ազատ ժամանցի կազմակերպման կարողությունները: Այդ նպատակով ուսումնասիրվեցին ծնողների կարծիքը իրենց երեխաների անձնային որակների, համատեղ գործունեության մասին, ինչպես նաև երեխաների կարծիքները ծնողների անձնային որակների և դիրքորոշումների մասին:

Փորձարարական դպրոցների սովորողների և նրանց ծնողների հարցման արդյունքները վկայում են, որ վերջին շրջանում զգալիորեն իջել է ծնողների հետ երեխաների շփման ու համատեղ գործունեության իրականացման մակարդակը:

Հարցերի պատասխանների արդյունքները մի կողմից բնութագրում են ծնող-երեխա կապը, մյուս կողմից համարվում են փոխադարձ գնահատման բնութագիր, որն արտացոլում է իրենց երեխաների մասին ծնողների կարծիքն ու դիրքորոշումները:

Աղյուսակ 1.

Ծնողների և երեխաների փոխգործակցության վերաբերյալ հարցումների արդյունքները գիտափորձից առաջ

Հարցումների արդյունքները	Այո	Ոչ այնքան	Ոչ
Տրամադրու՞մ եք ժամանակ ձեր երեխաների հետ համատեղ ժամանցի համար	35	30	35
Օգնու՞մ եք ձեր երեխային ուսման գործում	30	40	30
Քննարկու՞մ եք ընտանեկան խնդիրները երեխաների հետ	32	38	30
Իրականացնու՞մ եք համատեղ ստեղծագործական աշխատանք ձեր երեխաների հետ	23	36	41
Գիտե՞ք, թե ձեր երեխան որտեղ է անցկացնում իր ազատ ժամանակը	30	35	35
Ձերբազատվա՞ծ է արդյոք ձեր երեխան շփման բարդություններից	35	35	30
Կարողանու՞մ եք հաղթահարել հանդիպող դժվարությունները երեխայի դաստիարակման գործընթացում	30	45	25

Հարցման արդյունքում պարզվեց նաև, որ ժամանակակից հայ ընտանիքում երեխաները մասնակցում են ընտանեկան համատեղ աշխատանքներին, ընտանեկան բիզնեսին, ընտանիքի կենցաղային հարցերի քննարկմանն ու լուծմանը: Ընտանեկան փորձագործակցությունը հիմնականում իրականացվում է ծնողների խորհրդատվական դերով, դպրոցում կազմակերպվող միջոցառումների քննարկմամբ, որոշ տնային գործերի կատարմամբ:

Աղյուսակ 2.

Ծնողների և երեխաների փոխգործակցության վերաբերյալ հարցումների արդյունքները գիտափորձից հետո

	Այո	Ոչ այնքան	Ոչ
Տրամադրու՞մ եք ժամանակ ձեր երեխաների հետ համատեղ ժամանցի համար	57	24	19
Օգնու՞մ եք ձեր երեխային ուսման գործում	51	32	17
Քննարկու՞մ եք ընտանեկան խնդիրները երեխաների հետ	48	30	32
Իրականացնու՞մ եք համատեղ ստեղծագործական աշխատանք ձեր երեխաների հետ	41	29	30
Գիտե՞ք, թե որտեղ է անցկացնում իր ազատ ժամանակը ձեր երեխան	45	29	26
Ձերբազատվա՞ծ է արդյոք ձեր երեխան շփման բարդություններից	51	29	20
Կարողանու՞մ եք հաղթահարել հանդիպող դժվարությունները երեխայի դաստիարակման գործընթացում	47	39	14

Ինչպես երևում է աղյուսակների ներկայացված տվյալների համեմատական վերլուծությունից, փոխգործակցության բովանդակությունն արտացոլող ցուցանիշները զգալիորեն փոփոխված են: Այսպիսով, դպրոցի և

ընտանիքի համագործակցության մշակված ձևերն ու միջոցները նպաստեցին ինչպես մանկավարժական կոլեկտիվի և ծնողների համագործակցության զարգացմանը, այնպես էլ ծնողների և երեխաների արդյունավետ փոխգործակցությանը:

Յետազոտության արդյունքների վերլուծությունը մեզ հնարավորություն է ընձեռում անելու հետևյալ **եզրակացությունները**.

Յասարակության զարգացման արդյունքում սոցիալ-տնտեսական, քաղաքական վերածնունդներն ու զարգացումներն իրենց խորը կնիքն են դրել դպրոցի և ընտանիքի փոխհարաբերությունների վրա, որի ակտիվացմանը և արդյունավետության բարձրացմանն ուղղված հետազոտությունները հավաստում են, որ հիմնախնդրի արդիականությունն ունի օբյեկտիվ, անհրաժեշտ, պատմականորեն օրինաչափ և մանկավարժական կառավարման տեսանկյունից նպատակամղված բնույթ:

Դպրոց-համայնք համագործակցության հիմնախնդրի վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքների տեսական վերլուծությունը և մանկավարժական գիտափորձի արդյունքները թույլ են տալիս ձևակերպել հետևյալ եզրակացությունները.

1. Ժամանակակից հասարակության մեջ մանկավարժական նոր՝ մարդասիրական իդեալների վրա հիմնված հարացույցի ձևավորման գործընթացում հատուկ արդիականություն է ձեռք բերում դպրոց-համայնք համագործակցության կառավարման և այդ համատեքստում ծնողների ու երեխաների փոխգործակցության արդյունավետության բարձրացման խնդիրը:
2. Յետազոտությունում բացահայտված և հիմնավորված են կրթական բարեփոխումների արդի փուլում դպրոցի և համայնքի համագործակցության կազմակերպման վերաբերյալ մոտեցումները:
3. Յետազոտության մեջ դպրոցի և համայնքի համագործակցությունը, ծնողների և երեխաների փոխհարաբերությունների առանձնահատկությունները, ընտանիքի դաստիարակչական ներուժը դիտարկվել են որպես նրանց փոխգործակցության արդյունավետությունը պայմանավորող գործոններ:
4. Դպրոցի և համայնքի փոխգործակցությունը՝ որպես ներադպրոցական կառավարման համակարգում հատուկ կազմակերպված գործընթաց, իրականացվում է մանկավարժական որոշակի սկզբունքների, պահանջների, չափանիշների հիման վրա: Նրա արդյունավետությունը պայմանավորված է դպրոցի կառավարման սուբյեկտների կառավարչական գիտելիքներով և ոճերով:
5. Յետազոտության ընթացքում լուծվել են հետևյալ առաջադիր խնդիրները.
 - Յետազոտությամբ բացահայտված են դպրոցի դերը սովորողների և ծնողների փոխգործակցության գործում, մանկավարժների և ծնողների համատեղ գործունեության հնարավորությունները, ուսուցիչներին անհրաժեշտ հաղորդակցման, ճանաչողական, հուզական որակների

ձևավորման ուղիներն ու միջոցները, որոնք մանկավարժական պրակտիկայում այսօր համարվում են լուրջ հիմնախնդիրներ:

- Բացահայտված են դպրոցի, ծնողների, սովորողների, համայնքի համագործակցության և փոխգործակցության նպատակները, խնդիրները, բովանդակություն, հիմնական ձևերն ու միջոցները:
 - Բնութագրված են մանկավարժների, սովորողների և ծնողների համագործակցության իրական վիճակը դպրոցում, ընտանիքում, ինչպես նաև դպրոցի հնարավորություններն այդ գործընթացի բնույթի վրա ազդելու համար:
 - Բացահայտված են ծնողներին դպրոցի աշխատանքներին մասնակից դարձնելու, ինչպես նաև սովորողներին, ծնողներին և մանկավարժներին կոլեկտիվ ստեղծագործական գործունեության մեջ ներգրավելու միջոցները դպրոցի պայմաններում, գիտափորձով ստուգված է այդ գործընթացի արդյունավետությունը մեր հետազոտությանը հիմնախնդրի զարգացման համատեքստում:
 - Բացահայտված են ներընտանեկան փոխգործակցության մանկավարժական արդյունավետության չափանիշները:
 - Բնութագրված են դպրոցի, ընտանիքի և երեխաների համագործակցության առանձնահատկությունները:
 - Որոշված են դպրոցի, ընտանիքի և երեխաների համագործակցության զարգացման տեսական-մեթոդաբանական հիմունքները ծնողներին և սովորողներին դպրոցի կենսագործունեության, դասվարական և դասղեկական մեթոդական մասնախմբերի գործունեության մեջ ներգրավելու միջոցով:
 - Մշակվել և գիտափորձով ստուգվել են դպրոցի, երեխաների և ընտանիքի համագործակցության զարգացման միջոցներն ու ձևերը, որոնք թույլ կտան ապահովելու այդ գործընթացի սահմանավերջությունը և կարող են օգտագործվել դպրոցի մանկավարժական կոլեկտիվի կողմից ընտանիքի հետ տարվող աշխատանքներում:
6. Հիմնախնդրի վերաբերյալ մեր կողմից կատարված հետազոտությունը թույլ տվեց եզրակացնել, որ որպես դաստիարակության գործընթացի սուբյեկտ՝ ընտանիքը կատարում է մի շարք դաստիարակչական գործառույթներ: Այդ գործառույթների բնութագրման համար սահմանված են «ընտանիք» հասկացության էությունը, կառուցվածքը, տիպերը, նրա դաստիարակչական ներուժը:
- որակական դրական փոփոխություններ են արձանագրվել փոխգործակցող կողմերի՝ ուսուցիչների, ծնողների և երեխաների հարաբերություններում. ստացվել են նպատակաուղղված աշխատանքի դրական արդյունքներ, միաժամանակ ծնողների և երեխաների փոխգործակցության մեջ ծագած հակասական

իրավիճակները հաջողությամբ հաղթահարվել են առանձնացված բոլոր պայմանների կատարման ժամանակ,

- ստացված արդյունքները հիմք են տալիս հաստատելու, որ դպրոցի, ընտանիքի և երեխաների համագործակցության դրական բնութագրերը կարող են փոխվել և օպտիմալացվել, եթե այդ փոխգործակցությունը կազմակերպվում է համատեղ ստեղծագործական գործընթացում՝ հաշվի առնելով դպրոցի, համայնքի ընդհանուր և կոնկրետ առանձնահատկությունները, ինչպես նաև համակարգային, տարբերակված, կոմպետենտային մոտեցումները,
- մեզ հաջողվեց հաստատել, որ համագործակցության գործընթացի արդյունավետությունը մեծ մասամբ կախված է տվյալ դպրոցում դաստիարակության գործընթացը կառավարողի՝ ուսուցչի անհատական առանձնահատկություններից, մանկավարժական վարպետությունից, կառավարման ոճերի համադրման կարողությունից,
- հաջորդ փուլում մեզ անհրաժեշտ եղավ բարդացնել փորձարարական աշխատանքների խնդիրներն ու բովանդակությունը սոցիալ-մանկավարժական բազայի ընդլայնման և դպրոցական կուլեկտիվի կենսագործունեության անմիջական մասնակիցը դառնալու միջոցով, որը էականորեն փոխեց համագործակցության բնույթը:

Չետագոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. ժամանակակից ընտանիքի սոցիալ-մանկավարժական ներուժը, «Կանթեղ» 2/23, Երևան, 2005թ. էջ 238-242:
2. Մանկավարժական ներգործության հիմնական ուղղությունները, «Չայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1-2, Երևան, 2005թ. էջ 121-125:
3. Ծնողների ու երեխաների փոխգործակցությունը որպես հոգեբանամանկավարժական հիմնախնդիր, «Մխիթար Գոշ», 1, Երևան, 2005թ. էջ 103-106:
4. Դպրոցի և ծնողական համայնքի փոխործակցության կառավարման մեթոդները, «Մանկավարժական միտք», 1-2, Երևան, 2007թ, էջ 175-181:

ГРИГОРЯН ВААГН ВАРАЗДАТОВИЧ

**ФОРМЫ ОРГАНИЗАЦИИ СОТРУДНИЧЕСТВА
ПЕДАГОГИЧЕСКОГО КОЛЛЕКТИВА И ОБЩИНЫ В ШКОЛЕ.**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- “Теория и история педагогики”.
Защита диссертации состоится 20.12.12. в 14:00 на заседании специализированного совета 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу :0010 г. Ереван. ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Современный этап развития нашего государства характеризуется глобальными изменениями во всех сферах общественной жизни. Наряду с положительными продвижениями в обществе параллельно протекают процессы с отрицательными тенденциями: углубление социального расслоения , изменение образа жизни людей, разрушение прежнего мировосприятия , потеря морально-нравственных ценностей. Социально–экономические, политические перестройки и изменения поставили глубокую печать на школу, сообщество и на семейные отношения, которые составляют ее основную часть, придавая им другое значение.

Сотрудничество школы и сообщества является результатом целеустремленной и длительной работы педагогического коллектива школы, которая, в первую очередь, предполагает всестороннее и периодическое изучение семей, знания про стилиях, условиях и особенностях воспитания детей. Важнейшей функцией семьи как первичного института социализации личности является воспитание и развитие детей, социализация подрастающего поколения. Этим обусловлены возможности воспроизводства общества, воспитания подрастающего поколения, социализации, материального обеспечения , реализации стабильного духовного развития.

Цель исследования –разработать и теоретически обосновать педагогические условия: содержание, основные направления, формы и средства, которые будут способствовать сотрудничеству и взаимодействию школы, семьи и учащихся с точки зрения обеспечения единого воспитательного процесса.

Задачи исследования:

1. Выявить степень разработанности проблемы сотрудничества школы и семьи и взаимодействия учащихся и родителей, конкретизировать теоретические и концептуальные подходы плодотворных решений проблемы .
2. Определить и теоретически обосновать основные направления сотрудничества педагогического коллектива, родителей и учащихся.

3. Уточнить и охарактеризовать обеспечение содержания плодотворного сотрудничества педагогического коллектива школы, учащихся и методику его реализации.
4. Обработать, теоретически и экспериментально обосновать комплекс плодотворных педагогических условий, форм и средств взаимодействия учащихся, их родителей и педагогического коллектива в системе воспитательных работ школы.

Содержание исследование отражено в структуре диссертации, которая состоит из введения, двух глав, заключения, библиографии.

Научная новизна исследования.

1. Определены и охарактеризованы основные направления, особенности сотрудничества педагогического коллектива и семьи, взаимодействия учащихся и родителей в системе управления воспитательных дел школы.
2. Установлены принципы, средства, формы и показатели эффективности сотрудничества и взаимодействия педагогического коллектива, учащихся и родителей.
3. Разработаны и внедрены в систему воспитательных работ школы комплексы тех педагогических условий, применение которых делает продуктивным управление взаимодействия педагогов, учащихся и родителей и является залогом плодотворности воспитания и развития личности учащихся.

Теоретическое значение исследования.

1. Рассмотрены и анализированы теоретические и концептуальные подходы к сотрудничеству педагогического коллектива школы, общества, организации взаимодействия родителей и детей.
2. Обработаны и экспериментально обоснованы содержание работ направленных на сотрудничество и взаимодействие педагогического коллектива школы, учащихся и их родителей в рамках реализации учебно-воспитательного процесса.

Практическое значение исследования.

Разработанные методические рекомендации по организации и обеспечению психолого-педагогических работ с родителями, эффективного сотрудничества педагогического коллектива школы, семьи и учащихся могут быть использованы в процессе управления сотрудничества школы и общины.

Разработанные педагогические условия сотрудничества школы, учащихся и семьи позволят эффективно организовать этот процесс .

Разработанные практические рекомендации для субъектов учебно-воспитательного процесса школы.

Результаты исследования апробированы на расширенном заседании кафедры общей педагогики Армянского государственного педагогического университета им.

Х.Абовяна, на собраниях в базовых школах исследования, в научных, в том числе, международных конференциях, а также посредством публикаций.
По теме диссертации опубликовано 4 статьи.

VAHAGN VARAZDAT GRIGORYAN WAYS OF ORGANIZING PEDAGOGICAL STAFF AND COMMUNITY COOPERATION AT SCHOOL

Thesis for degree of candidate of pedagogical sciences 13.00.02- "Methods of teaching and education" (English language).

The defence of the thesis will be held in December 20, at 14⁰⁰, 2012 at the session of the Special Board HAC (Higher Attestation Commission) RA 020 "Pedagogy" to award degrees under the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, address: 0010, st. Tigran Mets 17, Yerevan.

SUMMARY

The relevance of the research.

The present of our country's development is described by global changes of public life in all spheres. With a number of positive changes some processes of negative changes take place in the society. The latter are society stratification deepening, people's lifestyle changes, previous ideology collapsing, the loss of spiritual-moral values.

Social-economic, political reformations and developments had a great influence on the interrelationship of the school, community and the main part of it-the family, reevaluating it. The cooperation of the school and the community is the result of pedagogical staff aimed and continuous work, which first assumes mutual and regular survey of families, knowledge about the child's upbringing style, conditions and peculiarities.

The aim of the research is, according to our great pedagogical experience, to define and to substantiate by experiment those pedagogical conditions which will make the school, learners and their families cooperation combined from the point of providing educational sphere.

The objectives of the research:

1. To reveal and analyze the school pedagogical staff, learners and parents cooperation processed degree and to define the theoretical-conceptual approaches for the effective solution to the problem.
2. To define the school pedagogical staff, parents and learners cooperation organization main directions.
3. To clarify and describe the school pedagogical staff, learners and parents cooperation providing these subject matter effectively and the methodology of its realization.

4. To process and theoretically define the learners, their parents and pedagogical staff cooperation effective pedagogical conditions- the complex of ways and means in the system of school educational work.

The content of the research is reflected on the structure of the thesis, which consists of introduction, two chapters, conclusion, and bibliography.

The scientific innovation of the research:

- Main directions, peculiarities of school pedagogical staff, learners and their parents families cooperation were defined and described in the system of school educational work.
- The efficiency ways , means and standards of school pedagogical staff, learners and parents cooperation were defined .
- The pedagogical conditions complex was processed and invested in the system of universal educational work with the community – the school providing general education . The use of the above mentioned complex makes the pedagogists , learners and parents cooperation organization more effective as the learners’ personality upbringing and development process efficiency guarantee.

The theoretical value of the research :

- The school pedagogical staff, the community especially its main part –the family, its educational function realization efficiency the theoretical and conceptual approaches on cooperation organization with children were surveyed and analyzed.
- The school pedagogical staff, learners and their parents cooperation work matter was processed and defined by experiment in the frames of educational work system.

The practical value of the research is that the methodological tasks processed with the aim of the school pedagogical staff, learners and family cooperation, providing efficiency , parents’ pedagogical illustration organization can be used in the process of managing school-community cooperation. The processed school, children and family pedagogical conditions give an opportunity to provide the process and can be used in the activities with the school pedagogical staff community.

Practical tasks are processed for the subjects of school upbringing process management.

The approbation of the research.

The main provisions of the research were discussed at the scientific conferences and the meetings of the Department of Pedagogy of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. On the topic of the dissertation were published 4 articles.